

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ
(Գիտական հոդվածների պարբերական ժողովածու)

№ 13

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2017

**ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ФАКУЛЬТЕТ ВОСТОКОВЕДЕНИЯ**

ВОПРОСЫ ВОСТОКОВЕДЕНИЯ
(Периодический сборник научных статей)

№ 13

Ереван
Издательство ЕГУ
2017

**YEREVAN STATE UNIVERSITY
FACULTY OF ORIENTAL STUDIES**

**JOURNAL OF ORIENTAL STUDIES
(scholarly periodical journal)**

№ 13

**YEREVAN
YSU PRESS
2017**

**Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի
արևելագիտության ֆակուլտետի
գիտական խորհրդի որոշմամբ**

Խմբագրական խորհուրդ՝

Մելիքյան Գուրգեն բ. գ. թ., պրոֆեսոր (*նախագահ*),
Մելքոնյան Ռուբեն բ.գ.թ., դոցենտ , Կարապետյան Ռուբեն
պ.գ.դ., Խառատյան Ալբերտ պ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ
թղթակից-անդամ, Հովհաննիսյան Դավիթ բ.գ.թ., պրոֆեսոր,
Հովհաննիսյան Լավրենտի բ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթ-
անդամ, Ոսկանյան Վարդան բ.գ.թ., դոցենտ, Սարգսյան Լևոն
պ.գ.դ., պրոֆեսոր, Սաֆարյան Ալեքսանդր պ.գ.թ., պրոֆեսոր,
Սաֆրաստյան Ռուբեն պ.գ.դ, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ
ակադեմիկոս, Քոչարյան Հայկ պ.գ.թ., դոցենտ, Կուզնեցով
Վասիլի պ.գ.թ., դոցենտ (Ռուսաստան), Տեր-Մաթևոսյան
Վահրամ պ.գ.թ., Բեյլենկովա Մարիա բ.գ.դ., պրոֆեսոր
(Ռուսաստան), Էքմեքչյան Լեոնա PhD (ԱՄՆ), Գրեկյան
Երվանդ պ.գ.դ., Իլյա Յակուբովիչ բ.գ.դ, պրոֆեսոր
(Գերմանիա), Ահմադջան Ղուրոնբեկով բ.գ.դ, պրոֆեսոր
(Ուզբեկստան)

Ավագյան Անժելա՝

ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏԸ ՀԱԼԻԴԵ ԷԴԻՓԻ
ՀՈՒՇԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ
(“Memoirs of Halide Edib”)

Բանալի բառեր. Հալիդե Էդիփ Ադըվար, Կոմիտաս Վարդապետ, հուշագրություն, հուշեր, գրականություն, պատմություն, հայերի կոտորած

Հալիդե Էդիփ Ադըվարը՝ 19-րդ դարավերջի և 20-րդ դարակեսի Թուրքիայի պատմության և գրականության ամենահակասական դեմքերից մեկը, ծնվել է 1884 թ. Ստամբուլում՝ պալատական պաշտոնյայի ընտանիքում: Նրա հայրը, ով բարձր պաշտոն էր զբաղեցնում Աբդուլ Համիդ Երկրորդի պալատում, եղել է համեմատաբար առաջադիմական հայացքների տեր անձնավորություն, ում շնորհիվ Հալիդե Էդիփը, բացի ընդունված արևելյան տիպի կրթությունից, ստացել է նաև արևմտյան, հաճախել է Ստամբուլի Ամերիկյան քոլեջը, որն ավարտել է 1901 թ.: Դրանից հետո սկսվել է հեղինակի ակտիվ գործունեությունը. նա գրել է հոդվածներ թուրքական պարբերականների համար, աշխատել որպես խմբագիր, ակտիվ քաղաքական և հասարակական կյանք է վարել, մասնակցություն է ունեցել ֆեմինիստական կազմակերպությունների ձևավորման և հետագա զարգացման գործում: Գրական բնագավառում հեղինակը սկսել է հանդես գալ 1908 թվականի

՝ ԵՊՀ թյուրքագիտության ամբիոնի ասպիրանտ:

Արևելագիտության հարցեր, հ. 13, 2017

նից՝ գրելով իր առաջին վեպը՝ «Սնիե Թալիփը»¹: Իր կյանքի ընթացքում Էդիփը գրել է քսանմեկ վեպ, պատմվածքների չորս ժողովածու, թատերական երեք ստեղծագործություն, գիտական և քաղաքական բազմաթիվ աշխատություններ, կատարել է գրական-գեղարվեստական թարգմանություններ, երկու հատորում անգլերենով և թուրքերենով շարադրել է իր հուշերը²: Իր հուշերը գրի առնելու գաղափարը Էդիփը կայացրել է Մուսթաֆա Քեմալի հետ տեղի ունեցած մի դեպքից հետո, որը նա ներկայացնում է իր հուշագրության 2-րդ հատորում. «Մի երեկո Մուսթաֆա Քեմալ փաշան եկավ ազարակ: Նա շատ տարօրինակ տրամադրություն ուներ: Նա քննարկում սկսեց այնտեղ գտնվող մարդկանց հետ. շատ բարդ էր հասկանալ, թե դեպի ուր է նա տանում իր այդ քննարկումը: Կարծես մի սխալաստիկ մրցույթ լիներ, որտեղ մրցակիցները փորձում էին պարտության մատնել միմյանց դիպլեկտիկ հնարքները: Այն պահերին, երբ նա (Մուսթաֆա Քեմալը- *Մ. Ա.*) զբաղված չէր՝ կովի դաշտում պայքարելով կամ էլ իր քաղաքական թշնամիներին հաղթելով, հաճույք էր ստանում այն բանից, որ իր ձեռքի տակ եղած մարդկանց ներգրավվում էր անիմաստ ու անպիտան վիճաբանությունների մեջ: Նա իր այդ վարքագծով ինձ հիշեցնում էր Մուրադ 4-րդին՝ ահեղ սուլթանին, ով իր սուսերամարտի արվեստը ցուցադրում էր՝ սրի մի հարվածով ավանակներին կիսելով երկու մասի: Հենց այդ պատճառով էս շատ մեծ ուշադրություն չէի դարձնում, թե ինչ է խոսում նա, երբ հարցն ուղղեց ինձ»:

Վերոնշյալ հատվածը մեզ համար կարևորություն է ներկայացնում, քանի որ բացահայտում է ու հնարավորություն է

¹ Алькоева Л. О., Очерки по истории турецкой литературы (1908-1939 гг.), Москва, 1959, стр. 174.

² Hülya Adak, Halide Edib ve Siyasal Şiddet: Ermeni Kırımı, Diktatörlük ve Şiddetsizlik, İstanbul, 2016, s. 5.

ընձեռում լիովին նոր տեսանկյունից տեսնելու Հալիդե Էդիփի վերաբերմունքը Մուստաֆա Քեմալին, նրա անցկացրած համեմատությունները Քեմալի վարքագծի և Մուրադ 4-ի ոչ այնքան իմաստալից սովորությունների միջև: Այնուամենայնիվ, վերադառնանք Հալիդե Էդիփի և Մուստաֆա Քեմալի գրույցին և տեսնենք, թե ինչ է դրդապատճառ դարձել երկհատորյա հուշագրության ստեղծման համար.

- Դուք ի՞նչ եք կարծում, Հանտ՛ւմ, ես ճիշտ չե՞մ:

- Ես լավ չհասկացա, Փաշա՛, թե ինչ էիք դուք ուզում ասել:

- Նստեք այս աթոռին, և ես կպատմեմ Ձեզ:

Ես նստեցի իր կողքի աթոռին: Նա միանգամից կորցրեց իր անորոշությունն ու վերջ դրեց վիճելու իր մանկական տոնայնությամբ: Նա այնքան պարզ ու անկեղծ էր, որ ես շատ վառ հիշում եմ ոչ միայն նրա ասածների իմաստը, այլև հենց այն բառերը, որոնք նա օգտագործում էր: Հենց այդ պահին շատ պարզ, առանց որևէ գաղտնիքի երևում էր, թե որն է նրա կյանքի շարժառիթը, և նա հնարավորինս պարզ ասաց այն, ինչ մտածում էր.

-Ահա թե ինչ ես նկատի ունեմ. ես ցանկանում եմ, որ յուրաքանչյուր ոք անի այն, ինչ ես եմ ուզում ու հրամայում:

-Արդյոք նրանք չե՞ն վարվում այդպես համարյա բոլոր այն գործերում, որոնք կարևոր են և լավ Թուրքիայի համար:

Նա մի կողմ թողեց իմ հարցը և շարունակեց նույն կոպիտ ու պարզ ձևով.

-Ես չեմ ցանկանում ոչ մի քննարկում, քննադատություն կամ խորհուրդ: Ես ինքս գիտեմ՝ ինչ անել: Բոլորը պետք է անեն այն, ինչ ես եմ հրամայում:

-Ե՛ս էլ, Փաշա՛:

-Դուք էլ:

Նրա բացարձակ անկեղծությունը պահանջում էր փոխադարձ անկեղծություն:

-Ես կհնազանդվեմ Ձեզ և կանեմ այն, ինչ Դուք ցանկանում եք, և կանեմ այնքան ժամանակ, քանի դեռ վստահ կլինեմ, որ Դուք ծառայում եք նպատակին:

-Դուք կհնազանդվեք ինձ և կանենք այն, ինչ ես ցանկանում եմ, - կրկնեց նա՝ ուշադրություն չդաձնելով իրավիճակին:

-Արդյոք սա սպառնալի՞ք է, Փաշա՛, - հարցրեցի ես հանգիստ, բայց խիստ:

Քողը, որը մասնակիորեն բացել էր նրա մտքի գաղտնարանները, կրկին փակվեց: Նա կարծես ներողություն էր խնդրում.

-Ցավում եմ,- ասաց նա,- ես չեի ցանկանում սպառնալ Ձեզ:

«Ես գիտեմ, որ նա կսպառնա ցանկացած մեկին, անգամ ամենաթույլին, սակայն ես նաև գիտեմ, որ այդ պահին նա նպատակ չունեի ինձ սպառնալու: Նա պարզապես ասաց այն, ինչ զգում էր անկախ նրանից՝ ով էր ներկա. դրանք նրա բարձրաձայն մտքերն էին, և իմ ներկայությունն այնտեղ էական չէր»³:

Ինչպես մենք ստորև կտեսնենք, Հալիդե Էդիփի և Մուստաֆա Քեմալի միջև տեղի ունեցած հենց այս զրույթն է հիմք հանդիսացել Էդիփի հայտնի հուշագրության ստեղծման համար, որը նախ գրվել է անգլերեն, ապա թարգմանվել թուրքերեն՝ կատարելով որոշակի փոփոխություններ: Հեղինակի համար շատ կարևոր է եղել իր հուշագրությունների տարածումը ոչ միայն Թուրքիայում, այլ ամբողջ աշխարհով մեկ, և դրա համար էլ Էդիփը սկզբնական տարբերակը գրել է անգլերեն լեզվով:

«Ես շատ լավ գիտեի, որ նա երբեք չի մոռանա այդ երեկո տեղի ունեցած միջադեպը, բայց ցույց կտա, թե մոռացել է, և ինձնից էլ կսպասի, որ ես շարունակեմ աշխատել՝ կարծես թե ոչինչ էլ չի

³ Halide Edib, The Turkish Ordeal, Being the further memoirs of Halide Edib, New York, 1926, p. 188-189.

պատահել: Սակայն այդպես ես չեմ կարող. լարվածությունը չափից ավելին է, իսկ աշխատանքը այնքան էլ կարևոր չէ ինձ համար, որպեսզի ստիպեմ ինձ անել այն: Եվ ես որոշեցի անել մի այլ բան, որը հետագայում մանրամասն ուրվագծվեց իմ մտքում: Ես կփորձեմ վերարտադրել այդ շրջանի Թուրքիայի պատմությունը՝ ճշգրտորեն գրի առնելով մեծ փորձության շրջանի իմ վերապրած փորձը: Ես կփորձեմ պատմել Թուրքիայի պատմությունն այնքան պարզ ու ազնվորեն, ինչպես դա կաներ մի մանուկ, որպեսզի մի օր աշխարհին այն ընթերցի ոչ թե որպես պատմական գրառում կամ քաղաքական տրակտատ, այլ որպես մարդկության մի փաստաթուղթ՝ տղամարդկանց և կանանց մասին, որոնք ապրել են ինձ հետ նույն ժամանակաշրջանում: Եվ ես կգրեմ այնպիսի լեզվով, որն ավելի հասանելի կլինի աշխարհին, քան իմ մայրենին: Հենց այդ երեկո՝ Մուստաֆա Քեմալի հետ տեղի ունեցած միջադեպից հետո, պատկած անկողնում, ես որոշեցի գրի առնել իմ հուշերը և դա անել անզլերենով»⁴, - գրում է Հալիդե Էդիփը:

Երկհատորյա իր հուշագրությունում Հալիդե Էդիփը շարադրում է սեփական կյանքի պատմությունը՝ վեց տարեկանից սկսած մինչև Թուրքիայի Հանրապետության ստեղծումը՝ 1923 թ.: Առաջին հատորում գերազանցապես ներկայացված է հեղինակի անձնական կյանքը, իսկ երկրորդում գերակշռում են քաղաքական դեպքերն ու իրադարձությունները, որոնք վերաբերում են Առաջին համաշխարհային պատերազմի ավարտից մինչև Թուրքիայի Հանրապետության ստեղծումն ընկած ժամանակահատվածին:

Առաջին հատորում, որը վերնագրված է «Հալիդե Էդիփի հուշերը», հեղինակը նախ շատ մանրամասն ներկայացնում է իր մանկությունը, ապա պատմում ընտանիքի, բարեկամների, ստացած

⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 190:

կրթության, ամուսնության, որդիների մասին՝ մեծ տեղ հատկացնելով իր զգացմունքների ու տպավորությունների նկարագրմանը՝ կապված զանազան դեպքերի հետ՝ թե՛ քաղաքական, թե՛ ընտանեկան և թե՛ անձնական: Էդիփը խոսում է նաև իր քաղաքական-հասարակական, գրական, գիտակրթական գործունեության մասին՝ պատմելով, թե ինչպես է գրել իր այս կամ այն ստեղծագործությունը, ինչպիսի կրթական գործունեություն է ծավալել, անդրադառնում է որբանոցներում ծավալած իր աշխատանքներին և այլն: Էդիփի ինքնակենսագրականում բավականին շատ են հանդիպում հատվածներ, որտեղ հեղինակը տարբեր առիթներով անդրադառնում է իր ժամանակաշրջանի Թուրքիայի ոչ թուրք ժողովուրդներին՝ հայերին, հույներին, հրեաներին, չերքեզներին, քրդերին: Պարզվում է, հեղինակն ունեցել է օտարազգի շատ հարևաններ, սպասավորներ, անգամ բարեկամներ: Ուշագրավ է, որ Էդիփը երբեք չի խուսափում խոսել այլազգիների ու նրանց խնդիրների մասին, նա անդրադառնում է նաև հայերին վերաբերող ամենատարբեր դեպքերին, անգամ վկայում է հայերի կոտորածների մասին՝ հստակ ունենալով այն դիրքորոշումը, թե իբր հայերն ու թուրքերը «փոխադարձաբար ոչնչացրել են միմյանց»:

Մեզ համար Հալիդե Էդիփի հիշյալ աշխատության մեջ առավելապես մեծ կարևորություն ու հետաքրքրություն են ներկայացնում վերջինիս՝ Կոմիտաս վարդապետի հետ ունեցած հանդիպումների մասին հիշողությունները: Բացի այն, որ այդ պատմությունները հսկայական նյութ են պարունակում Կոմիտաս վարդապետի մասին, դրանք նաև հնարավորություն են ընձեռում պատկերացում կազմելու, թե թուրքերը ինչպես են վերաբերվել նրան, ինչ վերաբերմունք են ունեցել նրա ծագման, գործունեության, արվեստի նկատմամբ:

Հալիդե Էդիփի պատմածից տեղեկանում ենք, որ նա Կոմիտաս վարդապետի հետ ծանոթացել է «Թուրքական օջախում»⁵, երբ վերջինս Էլույթ է ունեցել այնտեղ ամեն շաբաթ կազմակերպվող միջոցառումներից մեկի ժամանակ⁶: Ահա թե ինչպես է հեղինակը ներկայացնում իր ծանոթությունը Կոմիտասի հետ. «Հենց այդ դահլիճում էր, որ ես ծանոթացա Կոմիտաս վարդապետի՝ հայ քահանայի, երաժշտի և երգահանի հետ: Նա մեկն էր այն համբավ ունեցող երաժիշտներից, դերասաններից և դասախոսներից, ում «Թուրքական օջախը», հրավիրել էր Էլույթ ունենալու շաբաթական հավաքներից մեկում: Կոմիտասը հայտնի էր դարձել անատոլիական երգերի և հին գրեգորյան (առաքելական - Ա. Ա.) հոգևոր երգերի շնորհիվ, որոնք նա հավաքագրել էր Կ. Պոլսում և Անատոլիայում երկար տարիների համբերատար աշխատանքի միջոցով: Նա

⁵ Թուրքական օջախներ (Türk Ocakları) ծայրահեղ ազգայնամոլական հայացքներ ու գաղափարախոսություն ունեցող կազմակերպությունը հիմնադրվել է 1912թ. մարտի 12-ին 190 ռազմական ուսանող-բժիշկների անմիջական մասնակցությամբ: Այս կազմակերպության հիմնադրման հետ զուգահեռ Թուրքիայում սկսել է զարթոնք ապրել ազգայնամոլական գաղափարախոսությունը: Թուրքական օջախների ստեղծման նպատակներն արտահայտված են այդ կազմակերպության կանոնադրության մեջ. «Իսլամական ժողովուրդների առաջնորդ հանդիսացող թուրքերն իրենց ազգային դաստիարակությամբ և գիտական, սոցիալական, տնտեսական վիճակի առաջընթացով և վերելքով ձգտում են հասնել թուրքական ցեղի և թուրքերեն լեզվի կատարելության...»: - Ա. Սողոմոնյան, Թուրքական պատմագիտական ընկերության ստեղծումն ու գործունեությունը (1923-1970-ական թթ.), Թուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ, 2-րդ հատոր, Երևան, 2005 թ., էջ 22:

⁶ «Այդ տարիներին «Թուրքական Օջախի» ամբիոնն ու դահլիճը բաց էին տարաբնույթ դասախոսությունների, ներկայացումների և համերգների համար, որոնց նպատակն էր զարգացնել հասարակության ճաշակը: Եվ հենց այստեղ էր, որ սկիզբ էր դրվել խառը հանդիսատեսի սովորույթին»։ Halide Edib, *Memoirs of Halide Edib*, New York, 1926, p. 371.

դասավանդում էր հայ երիտասարդների նվազախմբին և համարվում էր մեծ առաջնորդ հայերի շրջանում:

Երբ նա հայտնվեց քահանայի երկար, սև վերարկուով, նրա մուգ դեմքին այնպիսի պարզամտություն կար, ինչպիսին բնորոշ է հասարակ անատոլիացուն, իսկ նրա աչքերը լի էին պաթոսով և ձգտումով, որոնք արտահայտվում էին նրա ձայնի պարզ և հզոր նոտաներում. ես զգացի, որ նա մարմնավորում է անատոլիական ժողովրդական արվեստն ու երաժշտությունը:

Ես բազմիցս լսել էի, թե ինչպես էին իմ երգրումցի և քամախցի սպասավորները երգում նրա արիաները: Նա պարզապես թարգմանել էր բառերը հայերեն: Բայց ես ուշադրություն չդարձրի լեզվին. ես պարզապես զգում էի անատոլիական ամայի անպատենրից եկած, լքված նուրբ մեղեդու ներքին ձայնը»⁷:

Մեջբերված հատվածը վկայում է, թե Կոմիտասն ինչպիսի մեծ տպավորություն է գործել Հալիդե Էդիփի վրա. վերջինս հիացած է եղել թե՛ Կոմիտասի անձով, թե՛ արվեստով: Սակայն, ինչպես հասկանում ենք մեջբերված հատվածից, Էդիփը Կոմիտասի երգին ու երաժշտությանը տվել է «անատոլիական» ծագում, անգամ գտել, թե վարդապետը պարզապես երգի բառերն է թարգմանել հայերեն, ասես դրանք ամեննին կապ չունեն հայկական երաժշտության և երգերի հետ:

Կոմիտասի՝ «Թուրքական օջախում» ունեցած ելույթի մասին տվյալների հանդիպում ենք նաև հայկական աղբյուրներում, որտեղ նշվում է, որ վարդապետը ելույթ է ունեցել իր փոքրիկ երգչախմբի հետ: Այդ ելույթին ներկա է եղել թուրք մտավորականության ընտրանին և անգամ երիտթուրք պարագլուխ Թալեաթ փաշան⁸: Կոմիտասի ելույթից առաջ բեմ է բարձրացել «Թուրքական օջախի» նախագահ Համդուլլահ Սուփհի բեյը, ով ներկայացրել է

⁷ Halide Edib, *Memoirs of Halide Edib*, New York, 1926, p. 370.

⁸ Բաղիկյան Խ., Կոմիտասը՝ ինչպես եղել է, Երևան, 2002, էջ 349:

Կոմիտասին, գովաբանել նրա արվեստը, նրա ունեցած դերը հայ երգի և երաժշտության զարգացման գործում, առաջարկել, որ թուրք երաժիշտներն էլ հետևեն Կոմիտասի օրինակին, ապա անդրադարձել է հայերի՝ Թուրքիայում ունեցած դերին⁹:

Վերադառնալով Հալիդե Էդիփի հուշերին՝ նշենք, որ ծանոթությունից հետո նրա շփումը Կոմիտասի հետ շարունակական բնույթ է կրել, մեծ երաժիշտը բազմիցս է հյուրընկալվել Էդիփի տանը, ելույթներ ունեցել: Կոմիտասին լսելու են եկել նաև այլ թուրք պաշտոնյաներ, որոնք բարձր են գնահատել նրա արվեստը¹⁰: Ահա թե ինչպես է Հալիդե Էդիփը այդ ամենի մասին պատմում իր հուշերում. «Այդ օրվա ծանոթությունը շարունակվեց, Կոմիտասը հաճախ էր գալիս իմ տուն՝ երգելու: Նա շարունակում էր գալ անգամ այն բանից հետո, երբ հայերն ու թուրքերը կոտորում էին միմյանց: Մենք երկուսս էլ լուռ տառապում էինք իրերի այդպիսի դասավորվածությունից, բայց մեզանից և ոչ ոք դա ցույց չէր տալիս: Երկու մեծ պոետներ Մեհմեդ Էմինն ու Յահյա Քեմալ բեյը, ովքեր միշտ ունեցել են ազգայնական հայացքներ, հետաքրքրված էին նրա (Կոմիտասի– Ա. Ա.) անձով և գալիս էին նրան ունկնդրելու: Յուսուֆ Աքչուրան էլ էր գալիս՝ դրդված լինելով երաժշտության նկատմամբ իր սիրով, սակայն նա հայտարարել էր, որ Կոմիտասը մեծ վնաս է հասցրել թուրքերին՝ գողանալով նրանց հայտնի մշակույթը՝ արտահայտված երաժշտության և երգերի ձևով»¹¹:

Ինչպես կռահում ենք մեջբերված հատվածից, Հալիդե Էդիփը, դարձյալ հիանալով և զմայլվելով Կոմիտասի արվեստով, միևնույն է, չի մոռանում հիշեցնել Կոմիտասի երաժշտության իբրև թե

⁹ Տե՛ս նույն տեղում, էջ 349-350:

¹⁰ Çalışlar İ., Halide Edib Açısından Tehcir ve Kırım, <http://nabukednazar.blogspot.am/2011/01/halide-edib-acsndan-tehcir-verm.html>

¹¹ Halide Edib, նշված աշխ., էջ 371-372:

թուրքական արմատներ ունենալը՝ այս անգամ դա անելով ուրիշի տված գնահատականի միջոցով: Հետաքրքիր է, որ Էդիփը, որքան էլ թեև հպանցիկորեն, այնուամենայնիվ, անդրադառնում է նաև հայերի և թուրքերի միջև ծավալված իրադարձություններին, բայց այդ մասին խոսում է որպես «երկուստեք կոտորածներ»:

Ոչ պակաս հետաքրքիր է, որ Հալիդե Էդիփը, անդրադառնալով Կոմիտասի կենսագրությանն ու ծագմանը, փորձում է նրան տալ թուրք-անատոլիական ծագում. «Կոմիտասը սերում էր Քյուրթահիայից, շատ աղքատ ընտանիքից,-պատմում է նա:- Նրա ծնողները չեն իմացել հայերեն, իսկ Կոմիտասը հայերեն սովորել է հետագա տարիներին: Նրա ծնողները հավանաբար ունեցել են թուրքական ծագում, ծագել են այն թուրքերից, որոնք միացել են առաքելական եկեղեցուն: Կոմիտասի ձայնը գրավել էր Քյուրթահիայի հայ եկեղեցու առաջնորդների ուշադրությունը, և նրան ուղարկել էին Հոմ՝ սովորելու երաժշտություն և դառնալու քահանա: Նա հայ ազգայնական էր, և կապ չունի՝ թուրքական, թե հայկական ծագում ուներ, ամեն դեպքում իր խառնվածքով և սրտով նա իսկական անատոլիական թուրք էր, թեկուզ չգիտակցելով դա: Նրա երաժշտական ջիղը նրան էր անցել ժառանգաբար: Ես հիշում եմ նրա ասած այն բառերը, որոնք ինձ համար բանալի դարձան դեպի բացահայտումը:

«Ես ժառանգել եմ իմ ծնողներից մի զույգ կարմիր կոշիկներ և երաժշտություն», - ասաց նա: «Կոշիկները՝ հորիցս, իսկ երաժշտությունը՝ մորիցս, նա կազմում էր երաժշտություն և հորինում խոսքեր»:

Դա մի հասարակ երգ էր երկու աղավնիների մասին՝ պարզ անատոլիական բարբառով: Մինչ օրս էլ հենց կանայք են Անատոլիայում կազմում երգեր և ստեղծում ժողովրդական պոեզիան: Դրանք փոխանցվում են բերանից բերան, և լավագույնները ինքնուստինքյան պահպանվում են:

Թե՛ որպես մարդ և թե՛ որպես արտիստ Կոմիտասը օժտված էր հազվադեպ հանդիպող հատկանիշներով: Կոմիտասի ասկետիզմը, պարզությունն ու գեղեցկությունը, որոնցով նա ուսուցանում էր հայ երիտասարդներին, արժանի էին հարգանքի: Շատ լավ կլիներ, որ այլ ազգայնականներն էլ նմանվեին նրան: Նա Անատոլիան արտացոլում էր իր երգերում, խորապես արժանի էր ունկնդրելու»¹²:

Այն որ Կոմիտասը մանուկ հասակում չի իմացել մայրենին, դա ճիշտ է. մեծ վարպետը հայերենին լիարժեք տիրապետել է միայն 12 տարեկան հասակում: Խոսելով Կոմիտասի կենսագրության մասին՝ կարող ենք փաստել, որ նա իսկապես ծնվել է Քյութահիայում 1869 թ.՝ աղքատ ընտանիքում, որը հայտնի է եղել իր երաժշտական ընդունակություններով: Կոմիտասը հիշում է, որ իր հայրն ու մայրը հորինել են երգեր¹³: Սակայն Կոմիտասը շատ վաղ հասակում կորցրել է մորը, ում մահից մի քանի տարի անց մահացել է նաև հայրը, և նա մնացել է որբ: 1881 թ. նրան բախտ է վիճակվել մեկնելու Էջմիածին և սովորելու տեղի ճեմարանում: Նրան չի խանգարել անգամ հայերեն չիմանալու հանգամանքը. ճեմարան ընդունվելուց մեկ տարի անց նա հաղթահարել է այդ խոչընդոտը և շատ լավ տիրապետել մայրենիին: Էջմիածնում շատ բարձր են գնահատել Կոմիտասի երաժշտական տաղանդը: 1893 թ. նա ավարտել է ճեմարանը, Խրիսյան Հայրիկը նրան շնորհել է արեղայի աստիճան և տվել Կոմիտաս հոգևոր անունը¹⁴: Կոմիտասը զբաղվել է գիտական և ստեղծագործական աշխատանքով, ժողովրդական երգերի մշակումով, գրել ուսումնասիրություններ՝ հայ հոգևոր երաժշտության մասին, ինչպես նաև դասավանդել

¹² Տե՛ս նույն տեղում, էջ. 372-373:

¹³ Յոլյան Բ. Ռ., Կոմիտաս, Երևան, 1969, էջ 14:

¹⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 19:

երաժշտություն ճեմարանում: Այս ամենին զուգահեռ նա շարունակել է իր կրթությունը, ուսանելու է մեկնել Թիֆլիս, ապա Ա. Մանթաշյանի հովանավորությամբ ուղևորվել է Բեռլին, որտեղ կրթություն ստանալուն զուգահեռ մասնակցել է երաժշտական տարբեր գիտաժողովների, միջազգային հանրությանը ներկայացրել հայ երաժշտությունը¹⁵: Իսկ 1910 թ. Կոմիտասը մեկնել Կ. Պոլիս¹⁶: Չնայած Պոլսում հաճախ հանդիպած թշնամական վերաբերմունքին՝ նա այստեղ ձեռք է բերել շատ ընկերներ, իր արվեստի երկրպագուներ, որոնց թվում կային և թուրքեր, որի մասին էլ հենց վկայում են նաև Հալիդե Էդիփի հուշերը:

Հալիդե Էդիփի հուշերում քանիցս հանդիպում ենք դրվագների, որոնք ցույց են տալիս, թե որքան է վերջինս հիացել և զմայլվել Կոմիտասի անձով և արվեստով.

«Մի օր Կոմիտասը երգեց Ավե Մարիան՝ հայերենով, 6-րդ դարի հազվագյուտ, միստիկ գեղեցկության մի երգ,- պատմում է Հալիդե Էդիփը:- Օդում սավառնող բացարձակ զմայլքն ու հոգևոր զգացմունքները այնքան հիացրին ինձ, որ ես հարցրի նրան՝ արդյոք նա Սաղմոսներից որևէ մեկը ենթարկել է երաժշտական մշակման: «Այո՛,- ասաց նա,- հարյուրմեկերորդը»: «Դուք շա՛տ հոգնած եք այն կատարելու համար», - հարցրի ես: Նա ինքն իրեն նետեց մի ցածր աթոռի վրա՝ դաշնամուրի կողքին, և նրա դեմքը լիովին պատվեց սպիտակ, ցավի տարօրինակ բծերով: Նա սկսեց երգել՝ չշարժվելով տեղից: Երբ նա սկսեց երգել, ես զգացի, որ օդում չմնաց Ավե Մարիայի սուրբ և պարզ գեղեցկության և ոչ մի նշույլ: Երզը սկսվեց անեծքի, սուլոցի, դառնության, ապստամբության, զայրույթի նման. շարունակելով երգել՝ նա կամաց-կամաց վեր կացավ՝ նմանվելով «Տաուստի» Մեֆիստոֆելես ուրվականին, իսկ երգի ավարտին նա կանգնեց իր ողջ հասակով մեկ: Հետո իր ձեռ-

¹⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 20:

¹⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 33:

քերը վեր բարձրացրած, դեմքը նման սպիտակ հուրի, աչքերը՝ երկու կրակե կայծակների՝ նրա ձայնը ավարտվեց որոտի աղմկարար դողանջի նման: Դա ցնցեց ինձ, և ես սկսեցի ինձ շատ տարօրինակ զգալ: Ես ակամայից վերցրի Աստվածաշունչը իմ կողքի պահարանից և գտա հարյուրմեկերորդ Մաղմուսի վերջին տողերը. «Առաւօտանց կ'ջնջեմ երկրի ամեն ամբարիշտներին, որ Տիրոջ քաղաքիցը սասկեցնեն բոլոր անօրէնութիւն գործողներին»:

Դա նրա հոգու ասելւոյան և վրեժի բղավոցն էր իմ ժողովրդի համար: Այդ պահին նա ուներ խելագարի և տանջալի այնպիսի հայացք, որ ես փորձեցի հնարավորինս հանգիստ և լուռ երևալ, սակայն նա շփոթված էր, նա գիտեր, որ մենք երկուսս էլ նայում ենք մեկս մյուսի հոգու խորքերը: Մենք տեսնում էինք միմյանց հայի և թուրքի արյունով, հայի ու թուրքի տանջանքներով, ինչպես մի ուժգին ջրհեղեղ մեր մեջ»¹⁷:

Վերոնշյալ պատմությունը ցույց է տալիս, թե ինչպես է Էդիփն ազդվել մեծ վարդապետի երգարվեստից՝ հիանալով նրա կատարմամբ, և միաժամանակ զգացել Կոմիտասի ցավն ու վիշտը: Հեղինակը այստեղ կրկին խոսում է հայերի և թուրքերի՝ «միմյանց կոտորելու» մասին՝ նշելով, որ թուրքերն էլ հայերին «հավասար տառապել են ու կորուստներ ունեցել»: Ամեն անգամ՝ հայերին անդրադառնալիս, Հալիդե Էդիփը առիթը բաց չի թողնում վկայել նաև թուրքերին «պատուհասած» հալածանքների ու կոտորածների մասին:

Իր հուշագրությունում՝ վերևում բերված մեջբերումից անմիջապես հետո, Էդիփը, գալով 1915 թվականին, առանց հիշատակելու տվյալ ժամանակաշրջանին վերաբերող սարսափելի դեպքերը, պարզապես վկայում է, որ «Թուրքական օջախի» միջնորդությամբ

¹⁷ Halide Edib, նշված աշխ., էջ 373-374:

Է Կոմիտասը ազատվել արքայից, իսկ իր ամուսին բժիշկ Ադնանը Թալեաթից թույլտվություն է խնդրել Կոմիտասին Կ. Պոլսից Փարիզ տեղափոխելու համար. «1915 թ.,- գրում է նա,- «Թուրքական Օջախը» օգտագործեց իր ազդեցությունը, որպեսզի ազատի նրան արքայից, սակայն 1916 թ. նա լուրջ հոգեկան խանգարում ուներ, ուրը հետևանքն էր այդ շրջանի սարսափելի իրադարձությունների: Բժիշկ Ադնանը խնդրեց Թալեաթին թույլ տալ նրան մեկնել Փարիզ՝ բուժվելու, այդ թույլտվությունը տրվեց նրան: Նա դեռ հոգեբուժարանում է»¹⁸:

Կոմիտասի՝ արքայից ազատվելու և Փարիզ մեկնելու մասին բազմաբնույթ տարբերակներ են ներկայացվում տարբեր աղբյուրներում: Օրինակ, Հուլյա Ադաքը՝ Հալիդե Էդիփի մասին գրքի հեղինակը, անդրադարձնալով Էդիփի հուշերին՝ մասնավորապես Կոմիտասի՝ Փարիզ տեղափոխվելու համար բժիշկ Ադնանի միջնորդությանը, նշում է, որ կան Հալիդեի Էդիփի վկայություններին հակասող փաստարկներ, և օրինակ է բերում Տիրան Լոքմազյոզյանի վկայությունը, որի համաձայն Էդիփն ու բժիշկ Ադնանը ոչ մի դեր չեն ունեցել Կոմիտասի՝ Փարիզ հեռանալու պատմության հետ¹⁹: Իսկ Յոլյանի «Կոմիտաս» աշխատության մեջ ներկայացվում է, որ Կոմիտասին արքայից ազատելու գործում օգնել են մի շարք արտասահմանյան դեսպաններ, այդ թվում՝ Ամերիկայի Միացյալ Նահանգների դեսպանն ու նրա կինը՝ տեր և տիկին Մորգենթաուները, ովքեր եղել են նրա երգարվեստի մեծ երկրպագուները, անգամ օսմանյան թագաժառանգ Աբդուլ Մեջիդը, ով բազմիցս մասնակից էր եղել Կոմիտասի համերգներին, անձամբ խնդրել է ազատել Կոմիտասին: Նրանց խնդրանքով և միջնորդությամբ է, որ վերջիվերջո հաջողվել է արքայից փրկել Կոմիտասին²⁰: Սակայն

¹⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 374:

¹⁹ Hülya Adak, նշված աշխ., էջ 63:

²⁰ Յոլյան Ի., նշված աշխ., էջ 363:

կա նաև մի այլ տարբերակ, որի համաձայն Կոմիտասին Փարիզ ուղարկելու հարցում մեծ դեր են ունեցել Եղեռնից մազապուրծ եղած սակավաթիվ հայ մտավորականները:

Սակայն ինչպիսին էլ լինեն Կոմիտասի փրկվելու և Փարիզ հեռանալու պայմանները, մեծ երաժիշտը չդիմացավ իր ժողովրդին պատուհասած դժբախտությանը և խելագարվեց: Կոմիտասը մահացավ 1935 թ.՝ ուղիղ 20 տարի գտնվելով հոգեբուժարանում:

Այսպիսով՝ կարող ենք ասել, որ չնայած Հալիդե Էդիփի հուշերը Կոմիտասի մասին շատ ծավալուն չեն, այնուամենայնիվ դրանք մեզ հնարավորություն են ընձեռում որոշակիորեն հասկանալու, թե ինչպես են թուրք քաղաքական գործիչները, նաև մտավորականները վերաբերվել Կոմիտասի անձին ու նրա երգարվեստին: Ճիշտ է, թեև նրանք չեն համակերպվել Կոմիտասի՝ ազգությամբ հայ լինելու հանգամանքի հետ, սակայն, միևնույն է, հիացել են նրա արվեստով և գնահատել այն:

КОМИТАС ВАРДАПЕТ В МЕМУАРАХ ХАЛИДЕ ЭДИБ

(“MEMOIRS OF HALIDE EDIB”)

(резюме)

Авагян Анжела

В статье автор, рассматривая первую часть работы "Воспоминания Халиде Эдиб", в особенности исследует воспоминания Халиде Эдиб Адывар, одной из самых противоречивых фигур турецкой литературы и истории конца 19-ого и средин 20-ого века, о встрече с Комитасом. Автор показывает, что эти воспоминания содержат огромную информацию о

Комитасе и предоставляют возможность увидеть и понять отношение турков к его личности, деятельности, творчеству и происхождению.

Автор также упоминает истории Халиде Эдиб о не турецких народах Турции ее времен, и показывает ее противоречивое отношение к резне армян в Турции.

**KOMITAS VARDAPET IN THE MEMOIRS OF HALİDE EDİB
("MEMOIRS OF HALIDE EDIB")
(summary)**

Avagyan Anzhela

In the article referring to the first volume of "Memoirs of Halide Edib", in particular the author studies Halide Edib's (who is one of the most controversial figures of Turkish history and literature of late 19th - mid 20th century) memoirs of her meetings with Komitas. The author states that these memories include a lot of information about Komitas and show what attitude the Turks had toward his origins, activities and art. The author also presents Halide Edib's stories about non-Turkish nationalities, which lived on the territory of Turkey at that time and discovers her controversial attitude towards the massacres of Armenians.